բռնապետիւ Հովիւով պիտի փայլի թէ ազգեցութեան, թէ լուսաւորութեան, թէ միութեան և թէ ազգօգուտ ձեռնարկութեանց կողմէ, և իր Գերա. Հովիւն ալ իրմով պիտի զօրանոյ, մեծնայ և պայծառ ապագայ մը պիտի սրտորատէ։

Ահա ասոնք են իզմիրցւոյ ակնկալութիւնները, ահա ասոնք են մեր փափաքները, և եթէ Գերա. Խորէն եպիսկոպոս Դալբաշեան հաստատէ ասոնք իրանցընէ, չէ թէ այս կամ այն մարդուն կամ կուսակցութեան յարելով, այլ արդարութիւնը, ճշմարտութիւնն ու սրբութիւնն իրեն աթոռակից ընելով, իզմիրցւոյ համար ազգաշէն բարերար մը պիտի լինի և Երկնչեան Մամուլը խնդագին պիտի հաշակէ այս ազգաշէն բարերարութիւնը։

(Արևելեան Մամուլ)

ՆԱՄԱԿ ԴԱՒԻԹԻՑ

Նորին մեծ. Շահը հեռացաւ Պարսկաստանից Ֆէրհատ-Միրզային իր տեղ փոխարքայ թողելով։ Հեռագիրը երկու օր առաջ լուր տուաւ Նորին Մեծութեան Լենգէլիէն շրջենաւ նստելը կասպից ծովով Աստրախան գնալու։

—Բուրգիստանի խռովութիւնը հանգստացնելու համար, Շոշայ-ըլ-Դովլան քաղաքից կառավարութեան խորհրդով գնաց Ուրմի, որ Քուրդերի Շէյխի և նոցա բէկերի հետ հաշտութեան դաշինք կապէ։

—Լսում ենք, որ Բուրգի-խանը, այժմեան սարփարաստը (քրիստոնէից պաշտպան պետական պաշտօնեայն) մի առանձին անաչառամտութեամբ սկսել է վարուել Հայերի և Ասորիների հետ։ Պաշտպան խանը, հակառակ իր պաշտօնի նշանակութեանը, որ պիտի պաշտպանէր քրիստոնեաներին և հրէաներին մահմետականների հալածանքներէն և անիրաւութիւններից,—ինքը սկսել է նոցա մէջ խռովութիւններ սերմանել։ Տալով իր պաշտօնին կրօնական բնաւորութիւն, Բուրգի-խանը արդէն եղել է կաթոլիկ միսիոնարների մօտեռանդ մի արբանեակ, և պարսից կառավարութեան բարի նպատակը քրիստոնէից մասին դէպի չարը գործադրելով, նա սկսել է Հայերի և Նեստորական Ասորիների մէջ կաթոլիկութիւն տարածել։ Նորա մի այդպիսի վարվողութիւնը, գտանելով խորին ընդդիմադրութիւն Նեստորականաց եպիսկոպոսի կողմից, մեծ հակառակութեան պատճառ դարձաւ խանի և Նորին սրբազնութեան մէջ, որոյ առիթով եպիսկոպոսը 140 թուման տուգանքի ենթարկուեցաւ Բուրգի-խանից։ Նեստորականաց եպիսկոպոսը այժմ Դավրէժ եկած է այդ անիրաւութեան դէմ բողոքելու։

. . . . . .

. . . . . Մի Թիֆլիսեցի հայ վաճառական Թէհրան գնալու ժամանակ, ճանապարհին աւազակները կողոպտում են նորան և խլում են մինչև 6000 մանէթ արծաթ. ինքը հազիւ կեանքը ազատում է անակնկալ մի դիպուածով։

—Մի ռուսաստանցի հայ, որ գալիս էր Կ. Պոլսէն, նոյնպէս աւազակների է պատահում Դիզէ-խալիլի մօտ (Խոյ ճանապարհին) իր բոլոր ունեցածը կողոպտում են և մերձ ի մահ վիրաւորում։

—Քաղաքիս մէջ մի քանի սրիկայներ մի հարուստ պարսկի տունն են մտնում գիշերով. խէնջարով նորան կտրատում են իր անկողնի մէջ, և բրնաբարելով նորա մանկահասակ կնոջը, հեռանում են առանց մի բան գողանալու նորա տնէն։ Անպատուած կինը յայտնի է մեր քաղաքում որպէս գեղեցկուհի, լաւ երգող և լաւ պար եկող տիկին։

Էսպիօն

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շաւիաթի օրէնքով Պարսից շահը պէտք է ոչ թոխէ այն հողի վերա միայն, որ պատկանում էր իւրեան։ Շահի դէպի Եւրոպայ ճանապարհորդութիւնը, որպէս զի պատուիրազանցութիւն չը լինէր ընդդէմ Յիշեալ օրէնքին, ասում են, մեծ Մուշտէիդը վճռեց այդպէս, որ Նորին մեծութիւնը հագնէ այնպիսի կօշիկներ, որոյ ստորոտի (պաղչի) կաչու ծալքերումը լցրած էր Պարսկաստանի հողով։ Այնպէս որ նա իւր ամբողջ ճանապարհորդութեան մէջ դարձեալ Պարսկաստանի հողի վերայ կը մնայ գայ։

***

«Մանզումէի Էֆքիար» լրագրում կարդում ենք հետեւեալ տողերը, քաղուած Ցիւրիխի „Neue Züricher Zeitung“ գերմաներէն լրագրից՝ «ասիէց հինգ տարի առաջ Պետերբուրգէն քանի մը հայեր, հայ երիտասարդ մը (պ. Բէկնազարեան) խրկած էին Փիւնախտի մանկավարժական դպրոցը վարժապետ պատրաստվելու։ Ցիշեալ երիտասարդը եռամեայ ընթացքէն ետքը Ալէքսանդրապոլի հայոց երկսեռ դպրոցին 200-ի չափ աշակերտաց տեսուչ կոչուեցաւ։ Ի վերջոյ նոյն հայերէն միւսը ի նշան գոհունակութեան և երախտագիտութեան, սոյն դպրոցի տնօրէն պ. Ֆրիզին, հայկական ուսկերչութեան արդասիք մի ծանրագին ոսկի բաժակ ընծայեց, որոյ վրա գերմաներէն և հայերէն ընդունողի և ընծայողի անունները գրելով։ Քանի մը օր առաջ մի և նոյն նպատակով հինգ երիտասարդք ևս խրկած են, որոնց հետ միանալով Կ. Պոլսոյ հայոց պատրիարքին եղբօրորդին, ըստ փափաքանաց Նորին սրբազնութեան, վեց եղած է նոյն դպրոցի հայոց թիւը այժմ։ Այս առթիւ կաւելցնենք նա և թէ Ցիւրիխի և Նորա շրջակայքը մէջ 24 հայ երիտասարդք կան ուսանող»։

***

«Մասիս» լրագրում կարդում ենք թէ՝ Բ. Դրան լրագրական դիւանին անօրէն վսեմ. Նուզհէթ էֆէնտին գաւառաց մէջ հրատարակեալ թուրքերէն լրագրաց պատուէր գրեց, որպէս զի իրենց էջերը տեղական իշխանութեանց վերա գովեստներով չը լցնեն, այլ գավառաբնակ ժողովրդոց նիւթապէս և բարոյապէս օգտակար ըլլալիք տեղեկութիւններով։

***

„Русскій Міръ“ ռուս լրագրի № 104 հետ ուղարկվեցաւ բոլոր ստորագրողներին մեզ արդէն ծանօթ բրօշիւրը „О существѣ національной индивидуальности“, որի մասին մենք անցեալ տարվայ «Մշակի» (№ 33) մէջ խօսած էինք։

***

Գերմանիայի քանի մի քաղաքներում, օրինակ Մանհէյմ, Ֆրանկֆուրտ, Վիսբադէն ուստիկ խռովութիւններ պատահեցան, պատճառ որ հացի և գարեջրի (պիվայի) վրա գները բարձրացան։ Ժողովուրդը կոտրեց հացի խանութների ու գարեջրատների դռները ու պատուհանները, պոլիցիան մէջ մտաւ անկարգութիւններին արգելք դնելու համար։ Երկու կողմից էլ կան սպանվածներ և վիրաւորվածներ։ Պոլիցիան շատերին կալանաւորեց։

***

Թէ մեր գրականութիւնը աղքատ է բանաստեղծական աշխատութիւններով, այդ գիտէ մեզանից ամէն մինը, որ փոքր ի շատէ ծանօթ է հայկական մամուլին։ Ինկատի ունենալով, թէ մեր հասարակութեանը որքան օգտաւէտ կարող են լինել երգերը, որոց միտքը առնուած է ոչ թէ երևակայական—ցնորամիտ ոգևորութիւններից, այլ ժողովրդի իրական կեանքը նկարագրելով, պատկերացնում են նորա տնտեսական աւերուած և հիւանդոտ դրութիւնը, նորա բարոյական և մտաւորական պակասութիւնները,—Մշակի խմբագրութիւնը դիտաւորութիւն ունէ այս տարի տպագրել պարոն Բաֆֆիի «Փունջ» անուանով բանաստեղծական գիրքը։ Ամբողջ գիրքը կը լինի պարոն Միանսարեանցի «Քնար Հայկականի» մեծութեամբ. նա բաժանուած է երկու մասն։ Առաջին մասը գրուած է բոլորը ոտանաւորներով և պարունակում է իր մէջ փոքրիկ պատկերներ և նկարագիրք առնուած ազգային կեանքից, այլ և զանազան քնարերգական և պատմական երգեր։ Երկրորդ մասը գրուած է արձակ շարադրութիւնով և բաղկացած է փոքրիկ վէպիկներից, որք առնուած են ժամանակակից անցքերէ։

«Փունջի» տպագրութեանը մատնակից լինելու ցանկացող անձինք կարող են բաժանորդ լինել, կանխիկ վճարելով 3 բուբլի, որոյ փոխարէն կըստանան մի օրինակ այդ գրքից։ Տպագրութիւնը վերջանալէն յետոյ վաճառելու համար «Փունջի» գինը կը նշանակուի 4 բուբլի։

Թիֆլիսում ստորագրուել կարելի է ուղղակի Մշակի խմբագրատանը, իսկ գաւառներում կամ այլ քաղաքներում՝ քանի մի գործակալների մօտ, որոց անունները կը յայտնենք մեր թերթի գալոց համարում։

Եթէ հայկական գրականութեան սիրողները իւրեանց նիւթական օգնութեամբ կը նպաստեն մեզ «Փունջի» տպագրութեանը, այնուհետև խմբագրութիւնս նպատակ ունի ի լոյս ածել պ. Բաֆֆիի և միւս բանաստեղծութիւնքը, որպիսի են «Խըվ-վըլի կ» վիպասանութիւն երեք հատորով պարսկաստանի կեանքից առնուած, «Ջահրումար» ռոման երկու հատորով Թիֆլիսու կեանքից առնուած, և նորա ամբողջ ճանապարհորդութիւնը Պարսկաստանում, որ բաղկանում է 50 նամակներից, որոցմէ զեռ 21-ը տպուած է Մշակի մէջ։

***

Լսում ենք, որ այս օրերս մի հարուստ Թիֆլիսցի հայ վախճանվելով, մի նշանաւոր գումար է կտակել Երևանի հոգևոր-ազգային դպրոցին։

***

Լսում ենք, որ Կովկասեան ուսումնարանական հոգաբարձութեան մէջ շուտով նստերը պիտի սկըսվին, որտեղ կը քննվի տարրական ուսումնարանների և ժողովրդական տեսուչների հարցը։ Ցանկալի կը լինէր, որ քննութիւնը և վճիռները հրատարակվէին և յայտնվէին հասարակական կարծիքին։

ԹԻՖԼԻԶԻ ՓՕՍՏԸ։

Ռուսատան Արտասահման ամեն օր

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ։	Քութախ Դարբանդ և Երևանգաւառը։	
ԵՐԵՔՇԱԲԹԻ։	Բագու Գանջա. Շուշի, Շամախից	
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ։	Քութախ Երևան, Ախալցխա Դերբանդ։	
ՀԻՆԳՇԱԲԹԻ	. . . .	
ՈՒՐԲԱԹ։	Քութախ, Երևան Ախալցխա։ Զաքաթալ, Նուխի։	
ՇԱԲԱԹ	Բագու, Դարբանդ Գանջա։	

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 9-ին)։

ՈՍԿԻՆ. (պոլուիմպէրիալ)	6 ռ.	8	կ.
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	4 „	20	„
„ երկրորդ տեսակը. . .	4 „	—	—
„ Ամերիկայի սերմից .	6 „	90	„
ԲՈՒՐԴԸ Թուչի	5 „	—	—
„ „ երկրորդ տեսակը	5 „	—	—
„ Թարեքեամի	3 „	20	—
ՇԱՌԱՐԸ Ռսի (Բրօցկու)	7 „	35	„
„ „ միւս տեսակը . .	7 „	20	„
„ զագրանիցու տրանսիդ.	5 „	10	„
մաքսը վճարած	8 „	35	„
ՇԱՌԱՐԱԻԱԶԸ Ռսի.	— —	—	—
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	15 „	50	„
ՂԱՀՎԱ Մօկո, շատ լաւը . . .	17 „	50	„
„ Մարտինիկոյի, ցածրը .	13 „	50	„

ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը.	1 „	40	„
„ „ երկրորդ տեսակը.	1 „	35	„
ԱԼԻՒՐԸ Գանջու հասարակ . .	1 „	60	„
„ Շորագեալու	1 „	65	„
ԳԱՐԻՆ Երևանի.	— —	80	„
ՊՂՊԵՂԸ	11 „	—	—
ՇԻՐԲԱԽՏԻ ձէթ.	8 „	—	—
ՄՈՄ	13 „	20	„

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 9-ին)

ՓՈԽԱՆԱԿ. բարաթ պօլս. . . վճա. . .	6—77
„ „ Թաւրիզում վճա. . .	4—82
ՄԱՐՍԷԼ և Փարիզ. 100 բուբլին աժէ. .	345 ֆր.
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդէսայի կուրսը) 7 բուբլի 34½ կոպէկը աժէ	1 լիրա
ՄԱՐՍԷԼՈՒՄ բամբակի 50 քիլօ (3 փութ 2 գրվ.) ծախվում է	75 ֆր.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվում է	95 ֆր.
„ առաջին տեսակը . . .	72½ ֆր.
„ երկրորդ տեսակը . . .	62½ ֆր.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Թուչի սպիտակ բուրդը ծախվում է	95 ֆր.
„ երկրորդ տեսակը . . .	90 ֆր.
„ գառան բուրդը աժէ . .	123 ֆր.
„ թարաք. բուրդը աժէ	82 ֆր.
„ Ղարաբ. բուրդը աժէ . .	60 ֆր.
„ երկրորդ տեսակը. . .	55 ֆր.

ՌԱՇՏ աբրեշումի 6 բաթմանը (2 փութ 7 գրվանքայ) 170—180 զուան (10 զուանը 3 բուբ. 22 կ.)

ՄԱԶԱՆԴԱՐԱՆ. աբրեշումի 6 բաթմանը աժէ 80 զուան։

ԿՕՍՐԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ խարջ Նուխվայ թելն (մնտաքը) շատ ընտիրը 147 բուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 27-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի աժէ 32 7/16 պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի աժէ 343¾ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ			—
երկրորդ			—
5% Բանկի տոմսակ	„	1 շրջանի	95¼
„ „	„	2 շրջանի	94
„ „	„	3 շրջանի	—

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆՈՆԱՒՈՐ ԵՒ ՎԱՃԵԼՈՒՉ ԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ։ (История и теорія каллиграфіи) Հանգերձ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով և գրասեղանների ու անօտոմիական ստուերագրերով։—Մ. Մ. Մրանսարեանց։—Պետերբուրգ 1872 թ., 8 ծալ, էջ 274։ Մի օրինակի գինը 1 ր. 70 կ. Հինգ օրինակինը 7 ր. 50 կ., Ճանապարհի ծախսով միասին։ Ներքեր § I կանոնաւոր և վայելուչ գրութեան գրութիւնը մինչև XVIII դարու վերջը (և տեղեկութիւններ Հայ տպագրութեան մասին 3—8) էջ 1—14։ § II. այս գիտութեան զարգացումը XVIII դարու վերջէն մինչև 1825 թուականը. էջ 14—19։ § III Նորա գաստատութիւնը մինչև Կարստերը, 19—22. § IV Կարստերի և նորա հետևողների դաստատութեան ձևը, 22—26։ § V. Ամանակով գրել ուսուցանել և մարմնամարզութեան վերաբերեալ գրագիտութիւնը (էջ 37, 59—62 և 122) 26—41. § VI. Հակմանի եղանակը 41—43. § VII. Դասատուութեան հիմնական կանոնները 44—52 § VIII. ուսանողների և ուսուցիչների պարտականութիւնների կերպը և յարաբերութիւնները (248) 58—83։ § IX. Հայ գրութեան պատմութիւնը. սեպագիր (83,249), բուն երկաթագիր, միջին երկաթագիր կամ միջակագիր, նօտրագիր, շղագիր, նրբագիր, դրամագիր՝ կոնդակագիր, փառագիր, փակագիր և վարազագիր, 33—106. Մեր աշխատութեան հիմունքները և կերպը (249), 107—124։ X. դպրոցական գրասեղանները, նոցա նստարանները, ստուերագրերը և գրագիտութիւնը (124—1—IV, 149—150, 249) 125—144։ Դպրոցական առողջապահութիւնը (195, 250, 251) 144—150։ Յաւելուած Ա։ Որոշութիւնների նշանակութիւնը գաստիարակութեան գործի մէջ, 150—178։ Յաւելուած Բ. Օգնական թանաքներ շինելու տարազներ և համառօտ տեխնիկականը բառարան 178—189։ Յաւելուած Գ. Ինտոնների ստիպողական հարկաւորութիւնը 190—196։ Յաւելուած Դ. Յառաջաբանութեան և վերջաբանութեան տեղ և հայերէն բառագրութեան գրագիտութիւնը (208—216) 196—221։ Յաւելուած Ե. Նատօմիական ստուերագրեր (224—1—16—225) և համառօտ բառարան 222—248։

Дозволено Цензурою. Тифлисъ, 10 Мая 1873 г. Մէլիքովի և ընկ. տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի